

Այց Դիլիջանի քաղաքային գրադարան

Ի կատարումն ՀՀ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 28.02.2013թ. «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման, մի շարք գրադարաններ ստացել են Հանրային գրադարանի կարգավիճակ: Հավատարմագրված գրադարանները պետության աջակցությամբ նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրի շրջանակներում ստացել են գրադարանային գույք և համակարգչային տեխնիկա: Կատարված աշխատանքներին տեղում ծանոթանալու և իրավիճակը գնահատելու նպատակով սեպտեմբերի 25-ին Շրջիկ գրադարանով Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների կողմից այցելություն է կատարվել Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային գրադարան:

2017թ. գրադարանը հավատարմագրվել և ստացել է հանրային գրադարանի կարգավիճակ՝ օգտվելով պետական աջակցության ծրագրից: Մանկական բաժինը ևս կահավորվել է նոր գույքով, համալրվել մանկական նոր գրականությամբ: Գրադարանն առանձնակի ուշադրություն է դարձնում նոր հրատարակությունների ձեռքբերմանը:

Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից Դիլիջանի քաղաքային և համայնքային հինգ գրադարաններին (Թեղուտ, Ջրհողեր, Հաղարծին, Աղավնավանք, Շամախյան) նվիրաբերվեց 385 միավոր գրականություն:

